ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ փետրվարի 11-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Մեղրի համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 28 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր քսան, բնակարան տրամադրելու՝ երեք, բնակարանի վերանորոգման, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման, երեխայի աչքի վիրահատության, եղբորը հաշմանդամության կարգ հատկացնելու, Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնը հոսպիտալի վերակազմակերպելու հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից տասնութին տրվել է դրական լուծում, երկուսը գտնվում է ուսումնասիրման փուլում:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են բնակարան տրամադրելու, բնակարանի վերանորոգման, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման, երեխայի աչքի վիրահատության, եղբորը հաշմանդամության կարգ հատկացնելու, Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնը հոսպիտալի վերակազմակերպելու վերաբերյալ դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարան